ԷԼԼԱ ԱՎԱԳՅԱՆ

ՄԻԱՅՆՈՒԹՅԱՆ,ԾԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՄԱՐԻԱՆՆԵ ԳՐՈՒԲԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ժամանակակից ավստրիացի գրող Մարիաննե Գրուբերը իր պատմվածքներում շոշափում է այնպիսի կարևոր և նուրբ թեմաներ, որոնց մասին հաճախ չի խոսվում: Այդպիսի թեմաներից են հիվանդության, ծերության, տառապանքի և մահվան թեմաները: Մեր շրջապատում շատ են մեծահասակ և հիվանդ մարդիկ, որոնք ֆիզիկական անլիարժեքության և կամ ծեր տարիքի պատճառով մեկուսացած են և ստիպված են օրերով միայնակ մնալ, ընկղմվել մտորումների մեջ, խոսել իրենք իրենց հետ: Սակայն նրանք երբեք չեն ընկճվում և հույս են փայփայում, որ միայնության զգացումը մի օր անպայման կլքի իրենց: Այս մարդիկ ուժեղ են և հպարտ, իսկ միայնությունը նրանց համար ընդամենն ազդանշան է, որ նրանք դեռ ասելիք ունեն այս կյանքում: Ծեր Ֆրանցիսկան Մարիաննե Գրուբերի «Ֆրանցիսկա կամ հայացք դեպի ոչ մեկի երկիր» /Վախի արձանագրությունից / պատմվածքի գլխավոր հերոսուհին, մեկն է այդպիսի մարդկանցից, քանի որ նա կորցրել է տեղը հասարակության մեջ, մատնվել միայնության, իսկ ահա խելքից պատուհաս փոքրիկ Ֆրեդին «Մոնգո» պատմվածքի հերոսը, իր մտավոր անլիարժեքության պատճառով չի կարող գտնել իրեն կյանքում: Գրուբերի կարծիքով «միայնությունը մարդկային մեծագույն ողբերգություն է» /հեղինակի հետ հարցազրույցից/, և կոչ է անում, ուշադրություն դարձնել այն մարդկանց վրա, որոնք տարբեր պատճառներով մեկուսացած են: Միայնության, ծերության և մահվան թեման է շոշափվում նաև Մարիաննե Գրուբերի «Դաշտակտցարի մահը» և «Դեղձանագույն ձիան հետքը» պատմվածքներում: «Հրաժեշտի և մահվան գաղափարները պատմվածքներում կազմում են հիմնական իմաստային առանցք» /Schaber Susanne./23.24.1991/, Die Presse Wien. /: Թեմատիկան մեզ տանում է հեղինակի մանկական հիշողությունների աշխարհ՝ դեպի Բուրգենլանդ, իր ճոխ և փարթամ բնությամբ, իսկ մեր առջև հառնում է հեղինակի պապը՝ Ունգերի ողբերգական կերպարով: «Այդ

երկու պատմվածքներն էլ մի ուշացած հրաժեշտ են իմ Բուրգենլանդում անցկացրած մանկությանը», գրում է Մարիաննե Գրուբերը 1991թվականի ապրիլին «Վիներին» ամսագրում /Marianne Gruber. /04.1991/.In:«Wienerin»./:

Նկարագրված է նախկին մանկաբարձուհի Թերեզայի կյանքի վերջին օրը: «Մերժողաբար նա սպասում է մահվանը»/Schaber Susanne /23.24.1991/. Die Presse, Wien/: Վաղուց կուրացած այդ ծեր կնոջը, որը ապրում է իր հավատարիմ շան հետ, արթնացնում են նախորդ օրվա իրադարձությունները: Նա տեղեկացել էր քաղաքապետ Հասզլերից, որ քանդելու էին իր տունն ու այգին և այդ ամենի տեղում կառուցելու փողոց: Այս սարսափելի լուրից ցնցված մեկը մյուսի ետևից արթնանում են Թերեզայի հիշողություններն իր անցած կյանքի մասին: Նա ընկղմվում է մտորումների գիրկը և կարծում, որ ինքն իր երկար կյանքում շատ է տեսել դառնություններ, դաժանություններ, վերապրել պատերազմի արհավիրքները, և, չնայած իր մասնագիտության շնորհիվ շատ կյանքեր է պարգևել, այսուհանդերձ «դիտում է մարդուն իր ծննդյան առաջին իսկ օրից մեկուսացած»: Թերեզան դեռ շատ երիտասարդ տարիներից է սովորել չվստահել մարդկանց, այդ պատճառով էլ նա համարում է, որ իր կյանքը անիմաստ է ընթացել և այդ պատճառով էլ պատրաստ է մեռնելու: «Երկու ծեր մարդիկ գյուղական Բուրգենլանդում մի գնահատող հայացք են նետում իրենց անցած կյանքի վրա: Ի՞նչ է մնում նրանց: Մահ, մի ակնհայտ ավարտ» /Quirchmayr Erwin./23.03.1991/. Arbeiter Zeitung /: Թերեզայի մահը, ըստ էության, ըմբոստություն է, բողոք՝ միայնության և մահվան դեմ, իսկ այդ բողոքը հեղինակը պատմվածքներում արտահայտել է կրակի գաղափարի միջոցով: Թերեզան պատվիրում է մահվանից հետո այրել իր տունը և ունեցվածքը, քանի որ կրակը, ըստ նրա՝ բողոքը կյանքի կոչելու միակ միջոցն է: Նման որոշում է ընդունում նաև Ունգերը՝ «Դեղձանագույն ծիան հետքը» պատմվածքում:

Հարկ է անդրադառնալ նաև պատմվածքի վերնագրին. «մահ» բառը հաղորդում է տեքստին սկզբից ևեթ հետին միտք, թաքնված ողբերգություն: Պատմվածքում մեռնում են երկուսն էլ՝ մարդն էլ, թռչունն էլ. նրանք վաղ ժամանակների մնացուկներ են, որոնք այսօր չեն գտնում իրենց տեղը և այդ պատճառով էլ մեռնում են: Ժամանակային հեռավորությունը պատմվածքում ընդգրկում է ընդամենը մեկ օր, ընդ որում տեքստում կատարված են նաև

կոնկրետություններ, ինչպես օրինակ «առավոտ էր» /Gruber Marianne./1991/. Fischer Taschenbuchverlag.Frankfurt am Main. 61/, « ժամը տասն էր» / էջ 68/ կամ էլ «համարյա արդեն կեսօր էր» / էջ 73/, ամեն ինչ կատարվում է մի ուրբաթ, օգոստոսի 19-ին: Առանձին գործողությունները միմյանցից առանձնացված են ստերեոտիպորեն ժամանակային ճշգրտումներով, ինչն էլ տպավորություն է ստեղծում, կարծես թե հեղինակը ցանկացել է պատմվածքը հնարավորին չափ լայն ներկայացնել: Հիմնական գործողությունները կատարվում են մեկ օրում, դաշտակտցարի մահվան պատմությունը ներկայացված է զուգահեռաբար: Դրվագային ձևով պատմվում է նաև պատերազմի մասին, Ունգերի կյանքից հիշողություններ, Հազալերի մասին: Այս դրվագները կոչված են ավելի լավ բացահայտելու կերպարները, օգնում են հասկանալու Թերեզայի անհանգիստ բնության և պատմվածքի ողբերգության տրամաբանական պատճառները: Գործողություններն այնպես են ներկայացված և զարգանում, որ թույլ են տալիս ծանոթանալ հերոսուհու ներաշխարհի հետ՝ մենք իմանում ենք Թերեզայի ներքին ապրումների, նրա զգացմունքների և տառապանքների մասին, նրա մասին անձնական մանրամասնություններ, որ նա կույր է, ունի լավ լսողություն և լավ կարողանում է տարբերել ձայները:

Առանձնահատուկ է պատմվածքում տեքստի լեզուն: Հեղինակը գծագրում է պատմվածքում մի այնպիսի աշխարհ, որը նա գիտի սեփական փորձից: Մեծ վարպետությամբ և ճշգրտությամբ նա ներկայացնում է գյուղի առօրյան և նրա մարդկանց, գյուղին բնորոշ հանգամանքներն ու գործողությունները: Թերեզան ապրում է մի տանը, որը բաղկացած է միայն «մեկ սենյակից», որի «մեջտեղում դրված է սեղանը», իսկ նրա կողքին՝ «օջախը», ապա՝ «լվացքի սեղանը», «մահճակալը բաժանված է սենյակից վարագույրով»/էջ 64/: Ջուրը նա բերում է ջրհորից՝ իջեցնելով դույլի շղթան մինչև ջրհորի հատակը այնպես, որ լսվի ջրի դրմփոցը»/էջ 63/: Պատմվածքում հեղինակը նկարագրում է գյուղական կյանքը վաղ աշնանը: «Այգիներում հասնում է տանձը: Ծղոտը դաշտերում արդեն այրվել է» /էջ 62/: «Հասկը հավաքվել է: Այժմ կարտոֆիլի հերթն է» /էջ 63/: Մարդիկ նախապատրաստվում են ձմեռվան, «Ունգերը մտածում էր, որ նա նաև տանիքը պետք է վերանորոգել տա, մինչև անձրևների գալը, ինչպես նաև ամրացնի ցանկապատը, քանի որ հոտը կարող է փախչել»

/էջ 74/: Տարածաժամանակային ներկայացումը մեզ թույլ է տալիս նաև դատողություններ անել անցյալի մասին: «Այս տարի քամիները շուտ են գալիս և առանց ցրտի»/էջ 62/:

«Դաշտակտցարի մահը» պատմվածքը մի պատմություն է մարդու և բնության փոխհարաբերության մասին, որը տեղակայված է մի հեռավոր, անցյալ, սակայն միաժամանակ դեռևս չմոռացված աշխարհում, որի նկատմամբ հեղինակը անվերջ կարոտ է զգում: Թերեզան, որը այդքան սերտ է կապված հայրենի բնության հետ, անհանգստանում է իր հայրենի հողի ճակատագրով: Նա, լինելով կույր, հատկապես հստակ է զգում այն հանգամանքը, որ իր հողը և իր տունը ուզում են ոչնչացնել, կանաչապատելու փոխարեն ասֆալտապատել, կտրել իրեն բնությունից: Թերեզան լավ է հասկանում, որ եթե մարդ կորցնի կապը բնության հետ, ապա կկորի կապը նաև մյուս մարդկանց հետ, և կառաջանան օտարության, միայնության զգացմունքներ, չէ՞որ Թերեզան իր ամբողջ կյանքում եղել է միայնակ: Ըստ նրա, «մարդ իր ծննդյան օրից մատնված է միայնության, յուրաքանչյուր սովորած բառի հետ նա դառնում է կրկին օտար» /էջ 107/: Նրա միայնությունը նման է դաշտակտցարի միայնությանը: Նրանք երկուսն էլ «մոլորված» ցանկանում են ևս մեկ փորձ կատարել թոթափելու միայնությունը, պայքարելու հանուն երջանկության, սակայն հանդիպում են միայն «երկաթյա լռության»: Այսօրվա մարդը, ըստ գրողի, մեկուսացված է բնությունից, իսկ աններդաշնակությունը, որը տիրում է նրանց միջև, կարող է բերել աղետի: Գրուբերը իր ստեղծագործություններում նկարագրում է մի աշխարհ, որը լի է հակասություններով, մարդը օտար է օտարների մեջ, անցյալը հետապնդում է նրան: Չկա ժամանակ, մարդը գտնվում է ժամանակից դուրս: «Դաշտակտցարի մահը» պատմվածքով նա ճանապարհորդում է դեպի անցյալը, դեպի հայրենի գյուղը, որտեղ նա առաջին անգամ ծանոթացել էր բնության հետ, որտեղ 40 տարեկան մարդիկ ունեն 60 տարեկանի տեսք, որովհետև նրանք գերհոգնած են ամեն ինչից՝ կյանքից, կենցաղի դժվարություններից, իրենց հետապնդող անցյալից, և փորձում են գտնել իրենց տեղը գյուղի համայնքում:

Պատմվածքում քննարկվում է նաև մեկ այլ հիմնախնդիր՝ կնոջ հիմնախնդիրը: Ակնհայտ է, որ հեղինակը պատահաբար չի ընտրել կին գլխավոր

հերոսուհի: Թերեզան ապրում է տղամարդկանց թշնամական շրջապատում, որը «փչացնում է կանանց», նրանց աշխարհը: Նախկին մանկաբարձուհի Թերեզան աչքերի առաջ ունեցել է տարիներ շարունակ «տղամարդկանց դեմքերի երկար շղթաներ» /էջ 77/, որոնք իրենց հետ բերել են ատելություն, ցավ և տառապանք:

«Դաշտակտցարի մահը» պատմվածքում արծարծված է նաև պատերազմի թեման, մի թեմա, որը ավստրիացիների համար դեռևս չավարտված և ցավալի թեմա է: Թերեզան և Ունգերը նույնպես տեսել են պատերազմի արհավիրքները, նրա մասնակիցը դարձել: Սակայն նրանց մասնակցությունը ավելի շուտ ոչ թե քաղաքական էր, այլ համոզմունքային: Ըստ նրանց, չնայած պատերազմի ավերիչ բնույթի, մարդը իրավունք չունի արհամարհելու մյուսներին, տնօրինելու նրանց կյանքը: Մարդը պետք է ամեն ինչ անի, որ չկորցնի իր մարդկային նկարագիրը, օգնի և փրկի մյուսներին, եթե դրա կարիքը նրանք զգում են: Ունգերը պնդում է, որ նա դեռ « չի ձերբազատվել պատերազմից», քանի որ այն դեռ «չի ավարտվել», և որովհետև նա «պատերազմը իրոք ատել է» /էջ 70/: Նա պատերազմի տարիներին օգնել է սահմանից անցկացնել մարդկանց, որպեսզի փրկի նրանց կյանքը: Այսպես, նա անցկացրել է սահմանից այն կողմ մի հրեայի, որպեսզի « գաղտնի ոստիկանությունը» /էջ 80/ նրան չձերբակալի: Պատերազմական թեման ավելի խորը ներկայացված է Մարիաննե Գրուբերի մեկ այլ «Ասա նրանց, նրանք պետք է դիմակայեն» /1986/, պատմվածքում: Նրանում նկարագրված է մի գյուղական երիտասարդի կյանք, որը անմարդկայնորեն է ներքաշվել պատերազմի մեջ, սակայն, որը գիտակցաբար զոհվում է՝ փրկելով մյուսների կյանքը:

Այս պատմվածքներից կարելի է դատել Գրուբերի պատերազմի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի մասին: Նա կարծում է, որ պատերազմը, որքան էլ փորձի խեղաթյուրել մաքուր հոգիները, ի զորու չէ կործանել մարդու միտքը, ապագան, քանի որ մարդը այնքան ուժեղ է, որ ինքն է ընդունում իր որոշումները, մանավանդ, երբ խոսքը գնում է մահվան մասին:

Այսպիսով, Գրուբերի պատմվածքներում ստվարանում է Ավստրիայի պատմությունը՝ պարտությունը պատերազմում և այդ պարտության վերապրումները տարիներ հետո: Նա պատմում է մարդկանց մասին, որոնք արդեն ծեր

են և ունեն կյանքի մեծ պատմություններ. սակայն որոնք մեկ օրում նորից վերապրում են իրենց կյանքը. պատմում է մահվան մասին. որը սկսվում է կյանքով և որի ավարտը տեսնելի է. քանի որ կյանքը «մի անհույս. անհեռանկար պայքար է» /Lampalzer Hans./1984/.Velag NiederΦsterreichisches Pressehaus/: Մարդիկ. որոնց նա ոչ թե նկարագրում. այլ ապրեցնում է. արթնանում են առավոտյան և մահանում երեկոյան: Նրանք ունեն միայն մեկ օր. որը բավական է ամբողջ կյանքի համար. իսկ մարդիկ բավականին ուժեղ են այդ կարճ կյանքի և երկար մահվան համար. և այդ ամենը կապված է նրանց բնության հետ կապվածության հետ. մի բնություն. մի երկիր. որտեղ լսվում է շոգը. որտեղ մի շոգ կեսօր «ստվերները գոլորշիանում են ինչպես հեղուկ մետաղը. և լույսը շլացնելով ցայտում է երկնքից». մի երկիր. որը գտնվում է սահմանի վրա. որով մարդիկ անցկացնում են ապրողներին:

Գրուբերի հերոսները մարմնավորում են կերպարներ. ճակատագրեր. որոնք չեն մոռացվում: Պարզ միջոցներով գրողը ներկայացնում է կատարյալ պատկերներ: Աննշանակալից վայրերը և հասարակ մարդկանց նա դարձնում է անժամանակյան ունիվերսալիաներ. ինչը կարող է անել միայն մեծ վարպետությունը: Գրուբերի հերոսները մի կողմից լի են անհագ կարոտով դեպի անցյալը. կորցրած երջանկությունը. ընկերությունը և սերը դեպի ճշմարիտ կյանքը. մյուս կողմից նրանք լի են մեղքի և մերժման զգացմունքներով: Մարիաննե Գրուբերը կարծում է. որ միայն ուժեղ մարդն է ի վիճակի դիմակայելու մի կյանքի. որը լի է դժվարություններով և աբսուրդ իրավիճակներով: «Մարիաննե Գրուբերն իր պատմվածքներում սթափ և սառը ձևով պատմում է պատմություններ մարդու գոյի ճգնաժամի մասին. որտեղ ճշմարտությունը և հույսը հաղթում են հոգու դատարկությանը: Պարզ լեզվով. սակայն գունեղ պատկերներով է նկարագրվում մարդկային հոգու բնությունը» /Magele Gudrun. /10.01.1992/.In: «DerStandard»/: Նրա ստեղծագործություններում հերոսները թեև ընկղմվում են կործանման. անձնական ձախողման աշխարհի մեջ. սակայն նրանք փորձում են վերգտնել իրենց և հասկանալ. որ կյանքը շարունակվում է. և որ նրանք այդ բարդ. բայց միաժամանակ քաղցր կյանքի անբաժանելի մասնիկներն են: